<<ԱՐՄԱՎԻՐ 1>> ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ նախագծային ուսուցման դերը սովորողների նախաձեռնողականության և սովորել սովորելու կարողունակության զարգացման գործում:

Հետազոտող ուսուցիչ՝ Սուսաննա Ասատրյան

Զարթոնքի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Ա. Անտոնյան

ԱՐՄԱՎԻՐ-2022

Բովանդակություն

Ներածություն ..... - 3 -

Պատմական ակնարկ ..... - 5 -

Ուսումնական նախագծի իրականացման փուլերը, հիմնական նպատակները, խնդիրները, կազմակերպման առանձնահատկությունները տարրական դասարաններում ..... - 6 -

Հետազոտական աշխատանք ..... - 13 -

Եզրակացություն ..... - 20 -

Գրականություն ..... - 21 -

Ներածություն

Ուսուցումը պետք է լինի խնդրահարույց: Այն պետք է պարունակի ինքնուրույն հետազոտական գործունեության տարրեր, կրի անհատական ստեղծագործական բնույթի որոնումների կնիքը: Այդ դեպքում կրթությունը ոչ թե սոսկ վերարտադրողական բնույթ կկրի, այլ կվերածվի ստեղծագործական գործունեության: Նման իրավիճակներում կաշխուժանան երեխաների շփումներն ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների հետ, և նրանց մեջ կձևավորվեն դրական կենսափորձ ու անձնային նոր որակներ:

Ա. Ի. Սավենկով

Այսօր դպրոցի խնդիրը ոչ միայն կրթության բարձր մակարդակի ապահովումն է, այլև աշակերտների մտածողության բազմակողմանի զարգացումը: Իսկ դա ենթադրում է սովորողների ձեռք բերած գիտելիքներն ինքնուրույն լրացնելու ժամանակակից տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու, սովորածը կենցաղում տեղին և ճիշտ օգտագործելու կարողությունների և հմտությունների ձևավորում:

Գաղտնիք չէ, որ երեխաների իմացական հետաքրքրությունների աշխարհը լի է հազար ու մի <<ինչուներով>>, և նրանք օր առաջ ուզում են ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները, եթե մեծերի կողմից լինում են խթանում և աջակցություն, ապա նրանք ոգևորությամբ ձեռնամուխ են լինում իրենց հարցերի պատասխանները հնարավորինս շուտ ստանալու գործընթացին:

Տարրական դասարաններում մենք սովորեցնում ենք գրել, կարդալ, հաշվել:Իսկ նրանք սովորո՞ւմ են, արդյոք սովորել: Գուցե այո, բայց մասնակիորեն ուսուցիչների մեծ մասը չի կարևորում սովորել սովորեցնելը: Մինչդեռ հենց դա էլ պետք է դառնա հանրակրթական դպրոցի նախնական օղակի ուսումնական գործընթացի կարևորագույն խնդիրը:

Այս տեսակետից հարցին մոտենալուց առաջ մենք ուսուցիչներս, պետք է հստակ գիտակցենք, թե ինչ է նշանակում դա: Առհասարակ, սովորել սովորելու խնդիրը շատ վաղուց է մտահոգել մանկավարժներին:

<<Հարկավոր է բացահայտել տալ մեթոդ, որի կիրառման դեպքում ուսուցիչները քիչ սովորեցնեն, իսկ սովորողները շատ սովորեն: Այդ դեպքում դպրոցներում անիմաստ

աշխատանքը կլինի քիչ, իսկ հաճելի աշխատանքը և հիմնարար հաջողությունները ավելի շատ >>: (Կամենսկի)

Աշխատության մեջ անրադարձել ենք նախագծային մեթոդին, իրականացման փուլերին, նպատակներին, տարրական դասարաններում նախագծային գործունեության կազմակերպման առանձնահատկություններին:

Կրթական բարեփոխումները և նորագույն տեխնոլոգիաների ներդրումը խթանում է աշակերտների ստեղծագործական-իմացական ներուժը և զինում նրանց հետազոտական աշխատանքի հմտություններով: Նման նորամուծությունների շարքում առանձնակի տեղ ունի հետազոտական նախագծերի մեթոդը:

Պատմական ակնարկ

Համաշխարհային մանկավարժության մեջ այս մեթոդը նոր երևույթ չէ: Այն առաջին անգամ նկարագրվել է 20-րդ դարի 20-ական թվականներին ԱՄՆ-ում կրթական բարեփոխումների շրջանում, ինչի արդյունքում կրթությունը դարձավ աշակերտակենտրոն: Հետագայում այն լայն տարածում ստացավ եվրոպական երկրներում: Մեթոդի ի հայտ գալը կապում է Ջոն Դյուի անվան հետ, երբեմն անվանում են հիմնախնդիրների մեթոդ:

Նախագծային աշխատանքը ենթադրում է ուսուցչի և աշակերտի համագործակցված գործունեության իրականացում, նա անհրաժեշտ է հստակորեն ձևակերպել թեման, պարզել, թե ով և ում համար է այն ստեղծում:

Սահմանվում են նախագծի կրթական դաստիարակչական ընդհանուր նպատակները որոնցից էլ բխում են ուսումնական խնդիրները: Անհրաժեշտ է նշել այն կոնկրետ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, որոնց աշակերտները պետք է տիրապետեն:

Նախագծային մեթոդն իր նշանակությամբ կարևոր տեղ է զբաղեցնում ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում:

21-րդ դարի նորագույն մանկավարժական այս տեխնոլոգիան թույլ է տալիս անահատականացնելու ուսումնական գործունեությունը, սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորելու ինքնուրույնություն՝ իրենց գործունեության պլանավորման հարցում: Այս տեխնոլոգիան ներառում է բազմաթիվ այլ մեթոդներ:

Նախագծային մեթոդի սահմանումը՝ նախագծային ուսուցումը նպատակային և որոշարկված գործունեություն է, որը ենթադրում է ուսուցման ողջ գործընթացի նախագծում պլանավորում, ծրագրավորում, հեռանկարների որոշում, ուսուցման կազմակերպման ձևերի մշակում, գիտելիքների հաղորդում, կարողությունների և հմտությունների ձևավորում, սովորողների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի կազմակերպում:

Նախագիծը պարտադիր պետք է ունենա պարզ, իրականացվելիք, հասանելիք նպատակ: Տարրական դասարաններում այն պետք է ունենա տարիքային առանձնահատկությանը բնորոշ հետաքրքրության որոշակի շրջանակ:

Ուսումնական նախագծի իրականացման փուլերը, հիմնական նպատակները, խնդիրները, կազմակերպման առանձնահատկությունները տարրական դասարաններում

Ուսումնական նախագիծը ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի ձևակերպման:

Այն հնարավորություն է տալիս սովորողին բացահայտելու իր մեջ եղած ստեղծագործական ներուժը: Խմբային աշխատանքների՝ նախագծերի իրականացման պարագայում այն առաջարկում է մի շարք խնդիրների լուծումներ, ինչպես նաև զարգացնում է սովորողների մոտ ինչպես ինքնուրույն, այնպես էլ թիմային աշխատանք կազմակերպելու հմտություն: Ուսուցման նախագծային համակարգի հիմնական արժեքն այն է, որ այն աշակերտներին ուղղորդում է ոչ թե որոշակի թեմայի պարզ ուսումնասիրության, այլ կրթական արդյունք ստեղծելու գործընթացին:

Ուսումնական նախագիծն ունի իր իրականացման փուլերը.

1. Հիմնահարցի ձևակերպում
2. Աշխատանքային խմբի (խմբերի) ձևավորում
3. Աշխատանքի բաժանում
4. Խմբերի, անհատների ինքնուրույն աշխատանք
5. Հետազոտություն
6. Ստացված արդյունքների ընթացիկ քննարկումներ
7. Կատարված աշխատանքների ներկայացում
   - նախօրոք որոշվում է ներկայացման ձևը՝ տեսանյութ, ֆոտոշարք, հոդված
8. Սովորողների և խմբի աշխատանքների գնահատում
   -գնահատումը կատարվում է և՛դասավանդողի, և՛ սովորողների կողմից
   -գնահատվում է յուրաքանչյուր սովորող
   -գնահատվում է ամբողջ խումբը
9. Հետագա աշխատանքի ուղիների նախանշում

Նախագծային մեթոդի ուսուցման հիմք կարելի է ընդունել սովորողի ակտիվ գործունեությունը՝ հաշվի առնելով սովորողի անձնական հետաքրքրությունները կոնկրետ այդ թեմայի շուրջ: Այս մոտեցումը առավել նպատակային է տարրական դասարաններում

աշակերտների մոտ՝ փնտրելու, պրպտելու ջիղը զարգացնելու նպատակն ունենալով: Էական նշանակություն ունի նաև այն, որ սովորողներին առաջարկվեն իրական կյանքից վերցված խնդիրներ, որոնք կարևոր են իրենց համար: Կրտսեր դպրոցականները սկսում են մտածել և տարորոշել, առանձնացնել իրենց շրջապատում կարևոր և անկերևոր երևույթները՝ ձևավորելով հետաքրքրությունների հստակ շրջանակ:

Այս խնդիրների լուծման համար սովորողին անհրաժեշտ կլինի կիրառել ինչպես մինչ այդ ունեցած գիտելիքները, այնպես էլ նոր գիտելիքներ, որոնք նա ձեռք կբերի աշխատանքի ընթացքում:

Սովորողի դերը նախագծային աշխատանքում էապես տարբերվում է. Պասսիվ լսողից նա դառնում է ակտիվ մասնակից, հետազոտող, գործունեություն ծավալող: Նա ազատ է գործունեության ձևի ու տեսակի ընտրության մեջ: Տարրական դասարանում սովորողի համար այս մեթոդը թերևս նաև անհատական առանձնահատկություններ բացահայտելու լավագույն խթան է, սկիզբ:

Նախագծի առանձնահատկություններից մեկն էլ աշխատանքի նախնական պլանավորումն է: Ամբողջ ընթացքը՝ սկսած ծագած խնդրից մինչև նախագծի նպատակը, անհրաժեշտ է բաժանել առանձին փուլերի՝ յուրաքանչյուրի համար իրենց ժամանակավոր խնդիրներով, պարզել այդ խնդիրների լուծման միջոցները և դրա համար ռեսուրսներ գտնել, աշխատանքի համար մանրամասն աղյուսակ կազմել, որտեղ նշված լինի յուրաքանչյուր փուլի իրականացման ժամանակը: Նախագծային աշխատանքի պլանի իրականացումը, որպես կանոն, կապված է գրականության և տեղեկատվության այլ աղբյուրների ուսումնասիրության հետ, տեղեկատվության ընտրության հետ: Հնարավոր է նաև կապված է տարբեր փորձերի անցկացման, գիտափորձերի, դիտումների, հետազոտությունների, հարցումների, ստացված տվյալների վերլուծության, եզրակացությունների ձևավորման և դրա հիման վրա ձևավորված սեփական տեսակետի հետ: Նախագծի խնդրի լուծման և գտնված լուծման մարմնավորման համար ստեղծվում է նախագծային արտադրանք: Նախագծային արտադրանքը պետք է ունենա պարզորոշ սպառողական հատկություններ, որոնք էլ բավարարեն խնդրի հանդիպած ցանկացած մարդու պահանջները, որի լուծմանը հենց ուղղված էր տվյալ նախագիծը:

Նախագիծը պարտադիր պետք է ունենա գրված մաս՝ հաշվետվություն աշխատանքի ընթացքի մասին, որտեղ նկարագրված են աշխատանքի բոլոր փուլերը (սկսած նախագծի խնդրի առաջադրումից), նրանց վրա հիմնված բոլոր որոշումները, առաջացած բոլոր խնդիրները, դրանց հաղթահարման միջոցները, վերլուծվում է հավաքված

տեղեկատվությունը, գիտափորձերի անցկացումը և դիտումը, ի մի են բերվում հարցումների արդյունքները, արվում են եզրակացություններ, պարզաբանվում են նախագծի հեռանկարները:

Այսպիսով ուսումնական նախագիծը ուսուցչի կողմից կազմակերպված և աշակերտների կողմից իրականացվող գործողությունների ամբողջությունն է: Դասավանդողի դերը նախագծի իրականացման տարբեր փուլերում կարող է փոխվել: Բոլոր փուլերում էլ նա հանդես է գալիս որպես խորհրդատու, օգնական: Նա գիտելիքներ չի փոխանցում, այլ ապահովում է սովորողի ինքնագործունեությունը, այսինքն՝խորհուրդներ է տալիս, հետևում է ընթացքին, ուղղորդում է: Ուսուցչի համար ուսումնական նախագիծը զարգացման ինտեգրված դիդատկտիկ միջոց է, ուսուցում և դաստիարակում, որը թույլ է տալիս զարգացնել նախագծային հատուկ կարողություններ ու հմտություններ՝ խնդրի առաջադրում, նպատակամղվածություն, իրականացվելիք պլաններ, վերլուծություն, ինքնաներկայացում, ինչպես նաև տեղեկատվության որոնում, ակադեմիական գիտելիքների օգտագործում ըստ նշանակության, ինքնակրթություն, հետազոտական և ստեղծագործական գործունեություն:

Ուսուցչի դերը նախագծային մեթոդը կիրառելիս անգնահատելի է հատկապես տարրական դասարանում: Հաշվի առնելով տարիքային առանձ-նահատկությունները՝ կարծում ենք տարրական դասարանի աշակերտները դեռևս չեն տիրապետում անհրաժեշտ այն կարողություններին, որոնց միջոցով իրականացվում է լիարժեք ուսումնական նախագիծ: Տարրական դասարանների առնչությամբ անհրաժեշտ է շեշտը դնել նախագծային գործունեության տարրերի վրա:

- ***Նպատակը***

Ստեղծել պայմաններ երեխաների ինքնուրույն կամ մեծահասակի օգնությամբ նորությունների բացահայտման, աստիճանական ինքնուրույնության զարգացման, ստեղծագործական ներուժի ակտիվացման, կարողությունների բացահայտման, յուրաքանչյուր երեխայի կրթության անհատական ուղու ստեղծման համար՝ դպրոցական գործունեության համապատասխան որոնողական աշխատանքների միջոցով:

❖ ***Խնդիրները***

- Ակտիվացնել իմացական հետաքրքրությունները՝ որոնողական և ստեղծագործական ինքնաարտահայտման միջոցով
- Ձևավորել ժամանակակից տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու տարրական կարողություններ
- Զարգացնել քննադատական մտածողություն և վերլուծելու ունակություններ
- Զարգացնել կարողություններ մեծերի օգնությամբ, իսկ հետագայում նաև ինքնուրույն խնդրի լուծման հնարավոր մեթոդների բացահայտման համար
- Զարգացնել երևակայություն և կոմունիկատիվ ունակություններ
- Դաստիարակել հարգալից վերաբերմունք ընկերների և մեծահասակների հանդեպ և նրանց աշխարհայացքի նկատմամբ:

❖ ***Նախագծային մեթոդի արդիականությունը***

- Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են մարդուց նոր մտածելակերպ. ընկալում, համագործակցային կարողություններ, նոր կոմպետենցիաներ, նոր դերեր, հմտություններ: Այս պայմաններում կարևոր է նախադպրոցական կրթության և հանրակրթության դերի վերաիմաստավորումը :
- Կրթական փոփոխությունները, զարգացման ուղղություններն ու տեմպերը նախադպրոցական մանկավարժներից նույնպես պահանջում են մանկական տարիքին համապատասխան մանկավարժական պրոցեսի կազմակերպման նոր ձևեր:
- Այս մեթոդներից մեկը նախագծային տեխնոլոգիան է:

❖ ***Նախագծային մեթոդի առավելությունները***

- Մեծահասակների հետ համատեղ գործունեության ընթացքում երեխան ունակ է կատարել այնպիսի գործողություններ, որոնց ինքնուրույն կատարումը դեռևս անհնար է:
- Յուրաքանչյուր տարիքում կարող է բացահայտվել հիմնական, այդ ժամանակահատվածին բնորոշ, երեխաների ինքնուրույն և մեծահասակների հետ համատեղ գործունեության բովանդակությունը:
- Մեծահասակների հետ համատեղ գործունեությունը ընկալվում է որպես համագործակցություն, որը ենթադրում է կողմերի համահավասար մասնակցություն և փոխադարձ հարգանք:

❖ ***Նախագծային գործունեության կազմակերպումը***

- Մեթոդը հնարավորություն է ընձեռում մանկավարժին իրականացնել գրեթե բոլոր կրթական ոլորտների ինտեգրացիա
- Հետազոտական և որոնողական աշխատանքներ
- Խոսքի զարգացում և հաղորդակցում
- Կերպարվեստ և գեղ. գրականություն
- Խաղային գործունեություն
- Ինտեգրացիայի կազմակերպումը դպրոցական ուսումնական հաստատությունների կրթության առաջատար խնդիրներից մեկն է, որը բարձրացնում է կրթության որակը, զարգացնում կրեատիվ մտածելակերպ:

❖ ***Նախագծային մեթոդի տարբերությունն այլ մոթոդներից***

- Երեխաների հետաքրքրությունների շրջանակի բացահայտում
- Երեխաների գիտելիքների և կարողությունների պրակտիկ կիրառություն, նախաձեռնողականություն

- Դպրոցի տարածքից դուրս գիտելիքների և հմտությունների ձեռք բերում երեխաների գործունեության մաքսիմալ ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում գործընթացի հանրային արդյունք(պրոդուկտ) և ներկայացում

❖ ***Նախագծային գործունեության պլան***

- Գործունեության մեջ ընկղմվում
- Գործընթացի կազմակերպում
- Գործընթացի իրականացում
- Արդյունքների ցուցադրություն

❖ ***Ծրագրի շարունակականություն***

Այսօր նախագծային մեթոդը լայն տարածում է ստանում հանրակրթական ուսումնական գործընթացում, որի միջոցով երեխաները ձեռք են բերում հետևյալ ունակությունները

- Անձնական փորձի ձեռքբերում
- Արդյունքի նախագծում, պլանավորում
- Անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկում
- Որոշումների կայացում
- Պատասխանատվության ստանձնում
- Կոմունիկատիվ հմտությունների ձեռքբերում

Այս ունակությունները նպատակահարմար է զարգացնել դպրոցական տարիքից:

❖ ***Ինչպես կազմակերպել նախագծի մեթոդը***

- Եռամիսնություն՝ ուսուցիչ, աշակերտ, ծնող
- Ուսուցիչը ուղղորդող՝ շտկող և խորհրդատու, ոգեշնչող. աշակերտն ու ծնողը հանդես են գալիս միասնաբար՝ աշակերտը գաղափարի կրող, ծնողը՝ օգնող

- Խմբերի կազմում ուսուցիչ+աշակերտ, ուսուցիչ+ծնող, ուսուցիչ+աշակերտ+ծնող

❖ ***Մեթոդի ներառականությունը***

- Նախագծային մեթոդը անհատականության վրա հիմնված ուսուցման ձև է
- Մեթոդը թույլ է տալիս հաշվի առնել երեխայի հոգեկան և ֆիզիկական վիճակը՝ապահովելով իրատեսական և իրագործելի ուսումնական, իմացական, կոմունիկատիվ ծանրաբեռնվածություն
- Մեթոդի իրագործման ընթացքում անհրաժեշտ է տարբեր մասնագետների ներգրավվածությունը, ինչը կնպաստի երեխայի խնդրի բազմակողմանի լուծմանը թիմային մոտեցմամբ
- Ծնողները կրթական գործընթացի ակտիվ մասնակիցներն են, ինչը առավել անհրաժեշտ է ներառական կրթության կարիք ունեցող երեխաների համար:

- Պրակտիկայում առավել հաճախ օգտագործվում են անհատական և խմբային գործունեության նախագծերի հետևյալ տեսակները.
    1. Հետազոտական-ստեղծագործական
    2. Դերային-խաղային
    3. Տեղեկատվական-կողմնորոշիչ
    4. Գործնական-ստեղծագործական-կողմնորոշիչ

Հետազոտական աշխատանք

Առարկա՝ Մայրենի

Դասարան՝ 2-րդ

Թեմա՝ Լավաշը

- բնույթով՝ տեղեկատվական-հետազոտական
- բովանդակությամբ՝ երեխան և ստեղծարար աշխարհը
- տեսակով՝ խմբային
- ժամկետով՝ կարճաժամկետ

Խնդիր-պրոբլեմ ՝ ինչպես է ստեղծվում հացը և ինչի համար է այն հարկավոր մարդուն

Նպատակը՝ մեծահասակի հետ միասին հավաքագրել տեղեկատվություն, թե ինչպես է հացը հասնում մեր սեղանին, կարողանալ հաջորդական վերլուծություն կատարել, հետազոտել, կատարել եզրահանգումներ, ապացուցել գաղափարները և արտացոլել վերջնարդյունքի / պրոդուկտի/ տեսքով:

Տեղեկատվության ձեռք բերման միջոցներ, աղբյուրներ

- Մեծահասակներ/ ուսուցիչ, ծնող, մասնագետ.../
- Տեսանյութեր/ համակարգիչ, հեռուստացույց…/

- Նկարներ, գրքեր
- Դիտումներ, ուսումնասիրություններ

Վերջնարդյունք, ներկայացում

- Լուսանկարում
- Լավաշի պատրաստում
- Գրքույկների ստեղծում
- Աշխատանքների ցուցահանդես

Մինչ հարցումներ կատարելը ես արդեն մեկ շաբաթ առաջ փորձեցի ստուգել երեխաների գիտելիքները տվյալ թեմայի շրջանակներում՝ իրականացնելով փոքրիկ հարցում: Պարզվեց, որ երեխաների իմացական գիտելիքները բավարար չէին, լավ չէին պատկերացնում լավաշի կարևորությունը, նշանակությունը:

Հարցումների միջոցով պարզենք, թե նախագծի մեթոդի կիրառման ժամանակ ինչպես կյուրացրեն թեման:Ինչ նոր գիտելիքներ ձեռք կբերեն և կավելացնեն իրենց իմացածին:

Ի՞նչ է լավաշը

- Հաց -10
- Ուտելիք -10
- Լոշիկ-2

- ***Որտեղի՞ց կարող ենք իմանալ լավաշի մասին***
- Մեծահասակներից -10
- Համակարգչից -9
- Գրքերից -2
- Գնալ հացի գործարան -1

- ***Բացի մարդուց ովքե՞ր կարող են հաց ուտել***
- Կենդանիներ/շուն, կատու…/ -18
- Թռչուններ/ծիտիկ, լորիկ…/ -4

- ***Ի՞նչ հացատեսակներ գիտեք***
- Լավաշ
- Մատնաքաշ
- Բոքոն

Լավաշը

- Թխվում է -6
- Եփվում է -12
- Պատրաստվում է -4

Ո՞րն է լավաշի հայրենիքը

- Գիտեմ -4
- Չգիտեմ -18

Ինչի՞ մեջ է թխվում լավաշը

- Թոնիր -21
- Վառարան -1

Օգնո՞ւմ եք մայրիկներին լավաշ թխելու ընթացքում

- Այո 50%
- Ոչ 50%

Ի՞նչ մթերք է հարկավոր հաց թխելու համար

- Ալյուր -22
- Ջուր -22

- Խմորիչ -9
- Աղ -8

Երբևէ փորձե՞լ եք հաց թխել

- Այո -3
- Ոչ -19

Դժվա՞ր է արդյոք հաց թխելը

- Այո -22
- Դժվարանում եմ պատասխանել -0
- Չգիտեմ -0

Ինչպե՞ս պետք է վարվել ավելացված հացի հետ

- Գցել գետնին -2
- Դնել բարձր տեղ -15
- Կերակրել ծիտիկներին -3
- Տալ կենդանիներին -2

Անհրաժե՞շտ է արդյոք ունենալ ավելցուկ հացի պաշար (հարցը ուղղվում է ծնողներին)

- Այո -18
- Ոչ -1
- Չգիտեմ -3

Ի՞նչ բառերով կբնութագրեք հացը

/համեղ, անուշաբույր, թարմ, բարակ, տաք, չոր, փափուկ, երկար, օվալաձև…/

Ծնողների օգնությամբ գտնում են ասույթներ, օրհնանքներ լավաշի մասին

Որքա՞ն է լավաշի պահպանման ժամկետը

- Երկարաժամկետ
- Կարճաժամկետ

- Անբանը լավաշ ուտելիս առողջ է,աշխատելիս հվանդ:
- Անխիղճ մարդը լավաշը երկաթ կդարձնի:
- Աշխատանքը սև է,լավաշը սպիտակ:
- Լավաշը հացվորին տուր,մի հատ էլ ավել տուր:
- Մեր պապերը ասել են թոնրի լավաշից ու տիկի պանրից ով որ կշտանա կնշանակի նա հիվանդ է:
- Բերան կա հաց չկա,հաց կա բերեն չկա:
- Որտեղ հաց էնտէղ կաց,որտեղ գինի էնտէղ քնի:
- Աստվածը հաց կտեսնի երազում,ծարավը ջուր:

Օրհնանքներ

- Դռներդ միշտ բաց լինի, տաշտներդ միշտ հաց լինի:
- Աստված մեկդ հազար անի:
- Առատ տարի, բերքը՝ բարի:
- Մեկ գանես, հազար հնձես:



Գնահատվեցին բոլոր երեխաները հյուրասիրությամբ՝ հացի տարբեր տեսակներով:

Հացը համարվում է մարդու հիմնական սնունդը, պետք է հոգատար լինել և խնայել հացը, քանի որ այն համարվում է սուրբ և ստեղծվում է չարչարանքով՝ դժվար աշխատանքի շնորհիվ:

Վերջնարդյունքը

Երեխաները սովորեցին համագործակցել, տեղեկատվություն հավաքել, փնտրել, որոնել, վերլուծել ու գտնել անհրաժեշտ տեղեկությունները:

Սովորեցին ճիշտ դիրքորոշում ունենալ հացի հանդեպ, հարգել հացը, ցանկացած անփույթ վերաբերմունք վիրավորում է հացի ծագումն ու արժեքը: Պետք է միշտ հարգել այն մարդկանց, ովքեր չարչարանքով հաց են ստեղծում և Աստծուց շնորհակալ լինել, որպեսզի մեզ չզրկի հանապազօրյա հացից: Հացը բարեկամության և խաղաղության խորհրդանիշ է:

Եզրակացություն

Նախագծերի մեթոդը 21-րդ դարի մանկավարժական տեխնոլոգիաներից է, որը թույլ է տալիս անհատականացնելու ուսումնական գործունեությունը, սովորողներին հնարավորություն է ընձեռնում դրսևորելու ինքնուրույնություն, փորձագիտական խմբի ձևավորում, պարտականությունների բաշխում, առաջադրանքների պարզաբանում, նյութերի հավաքում համացանցից:Միանգամայն ակնհայտ է, որ նախագծերի մեթոդը բոլորի՝ դպրոցականի համար հնարավորություններ է բացում ինքնադրսևորվելու, իր կարողությունները բացահայտելու, ապագա մասնագիտական գործունեությունը ուրվագծելու: Պարզ ասած՝ դպրոցականին հնարավորություն է տրվում փորձել և փորձարկել իրեն տարբեր ոլորտներում, բացահայտել մտերիմ ու հետաքրքիր բան և կենտրոնացնել իր ցանկությունները, ուժերն ու կարողությունները: Սա թույլ է տալիս ուսումնական գործընթացում ներառել ամենակարևորը՝ հիմնական մասնակցի՝ ուսանողի ակտիվությունը, հետաքրքրությունը և գիտակցված ինքնահիրացումը: Եվ, որ ամենակարևորն է, աշակերտի ողջ գործունեությունը ուղղված է նրա մտածողության ձևավորմանը, որը հիմնված է անձնական փորձի վրա: Նա ինքն է կիսում պատասխանատվությունը սեփական զարգացման, ապագայում ինքնուրույն գործունեության համար պատրաստվածության մակարդակի համար:

Գրականություն

1. <<Նախաշավիղ>>գիտամեթոդական հանդես 2015թ.
2. <<Նախաշավիղ>> 3. 2002թ.
3. <<Նախաշավիղ>> 5. 2016թ.
4. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան <<Գործնական աշխատանքներ մայրենիից>>
5. Խաչատրյան Ս. Գ. <<Դասախոսությունների փաթեթ>>